



ՀԵՌՈՒՍՏԱՏԵՍՈՒԹՅԱՆ ԵՎ ՌԱԴԻՈՅԻ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

ՈՐՈՇՈՒՄ

19 մայիսի 2020 թվականի թիվ 35-Ա

ք. Երևան

«ՖՄ-105.5» ՍՊ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ՆԿԱՏՄԱՄԲ ՎԱՐՉԱԿԱՆ ՏՈՒՅԺ ԿԻՐԱՌԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հեռուստատեսության և ռադիոյի հանձնաժողովն (այսուհետ՝ Հանձնաժողով) ուսումնասիրելով 2020 թվականի մարտի 09-ին հարուցված թիվ 2 վարչական վարույթի նյութերը՝ *պարզեց*.

Հանձնաժողովը «Հեռուստատեսության և ռադիոյի մասին» ՀՀ օրենքով վերապահված իր վերահսկողական գործառույթներն իրականացնելիս ուսումնասիրել է 2020 թվականի մարտի 06-ին «ՖՄ-105.5» ՍՊ ընկերության (այսուհետ՝ Ընկերություն) կողմից Հանձնաժողով ներկայացրած եթերի ձայնագրությունները և ուսումնասիրության արդյունքում արձանագրել է Ընկերության «ՖՄ-105.5» ռադիոձրագրի կողմից «Քաղաքական վերլուծություն Անդրեաս Ղուկասյանի հետ» հաղորդման հեռարձակման ժամանակ «Հեռուստատեսության և ռադիոյի մասին» ՀՀ օրենքի 14-րդ հոդվածի 4-րդ մասի 1-ին և 2-րդ կետերի պահանջների խախտում:

Հանձնաժողովը ղեկավարվելով «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 30-րդ հոդվածի 1-ին մասի բ) կետով՝ 2020 թվականի մարտի 09-ին Ընկերության նկատմամբ հարուցել է վարչական վարույթ:

Ընկերության «ՖՄ-105.5» ռադիոձրագրի կողմից 2020 թվականի փետրվարի 13-ի (ժամը՝ 20:00-ից 20:10-ն ընկած ժամանակահատվածում) և փետրվարի 14-ի (ժամը՝ 09:05-ից 09:15-ն ընկած ժամանակահատվածում) եթերում «Քաղաքական վերլուծություն Անդրեաս Ղուկասյանի հետ» հաղորդումը հեռարձակվել է հովանավորությամբ, անոնսում շեշտվել է՝ հաղորդման հովանավորն է «Հայ կառուցողական կուսակցություն»-ը՝ դրանով իսկ խախտելով «Հեռուստատեսության և ռադիոյի մասին» ՀՀ օրենքի 14-րդ հոդվածի 4-րդ մասի 1-ին և 2-րդ կետերի պահանջները:

Հանձնաժողովը 2020 թվականի մարտի 09-ին հարուցված վարչական վարույթի մասին ծանուցել է Ընկերությանը և հայտնել, որ այս հարցի վերաբերյալ կարող են ներկայացնել իրենց պարզաբանումները և բացատրությունները:

Հիմք ընդունելով «Հայաստանի Հանրապետությունում արտակարգ դրություն հատարարելու մասին» Կառավարության 2020 թվականի մարտի 16-ի թիվ 298-Ն որոշումը, հաշվի առնելով, որ Պարետի ցուցումով կարող են սահմանվել Հայաստանի Հանրապետության համապատասխան համայնքի վարչական սահման մուտք գործելու և

վարչական սահմաններից էլք կատարելու հատուկ ռեժիմ և ղեկավարվելով «Արտակարգ դրության իրավական ռեժիմի մասին» ՀՀ օրենքի 1-ին և 8-րդ հոդվածներով և «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 49-րդ հոդվածով, Հանձնաժողովը 2020 թվականի մարտի 20-ին թիվ 21-Ա որոշմամբ՝ մինչև 2020 թվականի ապրիլի 14-ը կասեցրել է Ընկերության նկատմամբ 2020 թվականի մարտի 09-ին հարուցված թիվ 2 վարչական վարույթը, որի մասին Ընկերությանը տեղեկացվել է:

Հարուցված վարչական վարույթի ընթացքում և վարույթը վերսկսելուց հետո Ընկերության կողմից որևէ պարզաբանումներ և բացատրություններ չեն ներկայացվել Հանձնաժողով:

Հանձնաժողովի հիմնավորումները (պատճառաբանությունը) և եզրահանգումը.

Այսպիսով, վարչական վարույթի բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ քննության, ձեռք բերված ապացույցների ուսումնասիրության և գնահատման արդյունքում Հանձնաժողովն ամրագրում է հետևյալը.

«Հեռուստատեսության և ռադիոյի մասին» ՀՀ օրենքի 14-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ հովանավորությունը հեռուստառադիոհեռարձակման գործունեություն չիրականացնող կամ տեսաձայնային աշխատանքների ստեղծման գործում չներգրավված ֆիզիկական կամ իրավաբանական անձի մասնակցությունն է հեռուստառադիոհաղորդման ուղղակի կամ անուղղակի ֆինանսավորմանը՝ այդ անձի անունը, ապրանքանիշը, համբավը կամ գործունեությունը գովազդելու նպատակով:

«Հեռուստատեսության և ռադիոյի մասին» ՀՀ օրենքի 14-րդ հոդվածի 4-րդ մասի 1-ին և 2-րդ կետերը սահմանում են.

«4. Արգելվում է հովանավորությունը՝

1) քաղաքական կուսակցությունների, նախընտրական հիմնադրամների և կրոնական կազմակերպությունների կողմից կամ դրանց միջոցներից.

2) լրատվական թողարկումների, պաշտոնական հաղորդագրությունների և քաղաքական հաղորդումների համար.»:

Հանձնաժողովն ամրագրում է, որ համաձայն «Հեռուստատեսության և ռադիոյի մասին» ՀՀ օրենքի արգելվում է հովանավորությունը քաղաքական կուսակցությունների, նախընտրական հիմնադրամների և կրոնական կազմակերպությունների կողմից կամ դրանց միջոցներից, ինչպես նաև արգելվում է հովանավորությունը լրատվական թողարկումների, պաշտոնական հաղորդագրությունների և քաղաքական հաղորդումների համար և ուսումնասիրելով հարուցված վարչական վարույթի նյութերը՝ ուսումնասիրության արդյունքում արձանագրում է, որ Ընկերության կողմից իրականացվել է իրավախախտում՝ Ընկերության «ՖՄ-105.5» ռադիոհորատի կողմից «Քաղաքական վերլուծություն Անդրեաս Ղուկասյանի հետ» հաղորդումը քաղաքական-վերլուծական հաղորդում է, որը հեռարձակվել է «Հայ կառուցողական կուսակցության» հովանավորությամբ:

«Հեռուստատեսության և ռադիոյի մասին» ՀՀ օրենքի 58-րդ հոդվածի համաձայն՝ հեռուստատեսության և ռադիոյի բնագավառը կարգավորող օրենսդրության պահանջների, լիցենզիայի պայմանների խախտման դեպքեր հայտնաբերվելու, ինչպես նաև պետական այլ մարմինների կողմից իրենց իրավասությունների շրջանակում հեռուստատեսության և ռադիոյի բնագավառը կարգավորող օրենսդրության պահանջների խախտումների կրկնակի դեպքեր հայտնաբերվելու և դրանց մասին

Հանձնաժողովին գրավոր տեղեկացնելու դեպքում Հանձնաժողովն իր որոշմամբ իրավասու է կիրառելու գրավոր նախազգուշացում կամ տուգանք:

Իսկ «Հեռուստատեսության և ռադիոյի մասին» ՀՀ օրենքի 59-րդ հոդվածը սահմանում է.

«1. Սույն օրենքի 58-րդ հոդվածի 1-ին մասով սահմանված կարգով հայտնաբերված խախտումների առկայության դեպքում, եթե այլ բան նախատեսված չէ սույն օրենքով, Հանձնաժողովն իրավախախտումը հայտնաբերելու օրվանից և (կամ) պետական այլ մարմինների կողմից իրենց իրավասությունների շրջանակում հայտնաբերված իրավախախտումների կրկնակի դեպքերի մասին տեղեկացվելու օրվանից ոչ ուշ, քան երկու ամսվա ընթացքում գրավոր նախազգուշացնում է խախտում կատարած հեռուստառադիոընկերությանը՝ պահանջելով վերացնել խախտումը և սահմանելով խախտումը վերացնելու համար ողջամիտ ժամկետ:»

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «Հեռուստատեսության և ռադիոյի մասին» ՀՀ օրենքի 14-րդ հոդվածի 4-րդ մասի 1-ին և 2-րդ կետերով, 58-րդ հոդվածի 1-ին մասով, 59-րդ հոդվածով՝ Հեռուստատեսության և ռադիոյի հանձնաժողովը *որոշեց*.

- 1.«ՖՄ-105.5» ՄՊ ընկերության նկատմամբ կիրառել վարչական տույժ՝ գրավոր նախազգուշացում՝ խախտումները հետագայում վերացնելու հանձնարարությամբ:
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում այն «ՖՄ-105.5» ՄՊ ընկերությանը պատշաճ ձևով հանձնելու օրվան հաջորդող օրվանից:
3. Սույն որոշումը կարող է բողոքարկվել ՀՀ վարչական դատարան՝ ուժի մեջ մտնելու օրվանից երկամսյա ժամկետում:

**ՀԵՌՈՒՍՏԱՏԵՍՈՒԹՅԱՆ ԵՎ ՌԱԴԻՈՑԻ
ՀԱՆՁՆԱԺՋՈՂՎԻ ՆԱԽԱԳԱՀ**

Տ. ՀԱԿՈԲՅԱՆ

19 մայիսի 2020թ.
ք. Երևան